սօր մնում են հայոց հսկաների մեծագործ շինուածքների փշրանքները, որ ժողովրդի մէջ յայտնի են Հայկայ բերդ անունով:

— Ինչպէ՞ս է այդ սարի անունը, — հարցրի Ասլանից:

— Բոզ-դաղ, որ նշանակում է մոխրագոյն սար, թուրքաց անուն է, — պատասխանեց նա, յետոյ աւելացրեց. — թուրքերը, տիրելով մեր երկրին աշխատեցին բոլորը, ինչ որ մեզ համար սուրբ էր եւ նոիրական, ջնջել եւ ոչնչացնել: Աշխատեցին, ա՛յն բոլորը, որ հային յատուկ էր, որ ազգային էր, օտարացնել, խորթացնել: Նրանք փոխեցին մեր լեռների, մեր գետերի, մեր հովիտների ու մեր գիւղերի անունները: Այդ երկիրը, որ մեր ազգի նախկին օրօրոցն է եղել եւ մինչեւ այսօր բնակեցրած է հայերով, նրանք Քուրդիստան կոչեցին:

— Բայց ինչպէ՞ս էր այդ սարի հին անունը:

— Դժբախտաբար չգիտեմ: Այդ մասին գրքերի մէջ ինձ ոչինչ չէ պատահել կարդալ, իսկ ժողովուրդը մոռացել է:

Ձիաներով անհնար էր բարձրանալ սարը: Ցած իջանք, երկու երիտասարդները ներքեւում պահեցին ձիաները, ես եւ Ասլանը սկսեցինք վեր բարձրանալ: Ժամանակը մաշել ու եղծել էր բոլոր շաւիղները, որ տանում էին դէպի վեր: Մենք համարեա մագլցելով էինք անցնում սարսափելի առապարները, ուղղաձիգ ժայռերը, նեղ կիրճերը եւ աճած, միմեանց հետ հիւսուած թուփերն ու մացառները, որ հանդիպում էին մեր ճանապարհի վրայ: Բայց այդ ահագին դժուարութիւնները հեշտանում, բոլորովին անզգալի էին դառնում այն մեծ բաղձանքի ուժգնութեան ներքոյ, որ տիրում էր իմ մէջ՝ տեսնելու մեր նախահոր նոիրական ամրոցը, որտեղ ապրել էր նա, որտեղից պատերազմել էր իր ժամանակի խօլ եւ վիթխարի տիտանների հետ, պաշտպանելով իր գերդաստանը, որ երեք հարիւր հոգուց էր բաղկանում: Այդ երեք հարիւր հոգին կազմում էր այդ ժամանակ հայոց ամբողջ ազգը: Այդ երեք հարիւր հոգով տիրեց նա Հայաստանը: Դարերի, մի քանի տասնեակ դարերի, սասանմունքից ու աւերմունքից յետոյ դեռ շատ բան էր մնացել, որ յիշեցնում էր հսկայ ձեռքի հսկայական գործը: Հանդիպում էինք արհեստական այրերի, որոնց ծայրը կորչում էր լեռան խորքերում, եւ որոնք ծառայելիս են եղել որպէս գաղտնի հաղորդակցութեան անցքեր: Հանդիպում էինք վիմափոր ջրամբարների, որոնց մէջ զանազան կողմերից խողովակներով հաւաքւում էր անձրեւի ջուրը եւ պահւում էր պաշարման ժամանակի համար, որովհետեւ լեռան վրայ աղբիւր չկար: Հանդիպում էինք զանազան մթերանոցների, որոնց մէջ պահւում էր թէ պաշար եւ թէ զէնքեր: Երկայնաձիգ լեռը, որ ներքեւից դանակի նման սուր էր երեւում, վերեւում հետզհետէ ընդար-